ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 025

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1717-Լ որոշման N 2 հավելվածի 1.2.1 կետերով.ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների սխեմատիկ պատկերները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների օրացույցը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների պլան-ժամանակացույցը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ազդարարման և տեղեկատվության փոխանակման սխեման՝ համաձայն N 5 հավելվածի.

6) ստանդարտ գործողությունների ընթացակարգերն ըստ բնորոշ աղետների ՝ համաձայն N 6 հավելվածի.

2. Սույն որոշման 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:

3. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման ժամանակ՝ սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով հաստատվող N 6 հավելվածում ներառված միջոցառումներից որևէ երեքն իրականացնելու դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԱՏԱՐՈՂ՝ Տ. ՆՈՎԻԿՈՎԱ